ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հոկտեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-379-01.10.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1440-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-379-01.10.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը, որպես երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքի ապահովման երաշխիք, արգելում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող ցանկացած տեղեկության, ինչպես նաև բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը: Երեխայի լիարժեք զարգացման վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեղեկությունների շրջանակը շատ ավելի լայն է, քան նախագծով առաջարկվող ոչ ավանդական սեռական հարաբերություններին վերաբերող կամ ավանդական սեռական հարաբերությունների սոցիալական խեղված ընկալմանն ուղղված տեղեկությունները, ուստի միայն վեր-ջինների տարածման կամ քարոզչության համար արգելք սահմանելը գտնում ենք՝ արդա-րացված չէ: Բացի դրանից, լրացվող 18-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությունն արդեն իսկ պարունակում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող տեղեկատվության և գրականության տարածման արգելք, հետևաբար, նախագծի 1-ին հոդվածով լրացվող 1-ին մասը կրկնում է օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությամբ սահմանված նորմը, ինչը չի բխում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նախագծի սահմանումները պետք է «ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը», մինչդեռ նախագծում օգտագործված որոշ հասկացություններ միանշանակ չեն ընկալվում, հետևաբար, չեն կարող ունենալ միատեսակ կիրառում (օրինակ՝ «ոչ ավանդական սեռական հարաբերություն» և «ավանդական սեռական հարաբերություն» և այլն):

Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված արարքի կատարման նպատակը շեշտելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով լրացվող 178.2-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ նշված արարքի համար պատասխանատվություն նախատեսվում է անկախ տեղեկատվություն տարածողի կամ քարոզողի մոտ դիտավորության առկայությունից:

Ելնելով նշվածից՝ գտնում ենք, որ նախագծերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է և առաջարկվում է գործող օրենքները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2018 թվականի N 1440 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արսեն Մանուկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-379-01.10.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 29
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-379-01.10.2018-ՊԻՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի 18-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր մասերով՝

«Երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացմանը սպառնացող տեղեկատվություն տարածելը կամ քարոզչությունն արգելվում է:

Սույն հոդվածի իմաստով՝

1) երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացմանը սպառնացող տեղեկատվություն տարածելը կամ քարոզչությունը այնպիսի տեղեկությունների տարածման գործընթաց է, այդ թվում՝ իրական փաստերի և տեղեկատվության խեղաթյուրման միջոցով, որի նպատակն է ազդեցություն գործել երեխաների ֆիզիկական, մտավոր կամ հոգևոր լիարժեք զարգացման վրա և որն ուղղված է երեխաների մոտ՝

ա. ոչ ավանդական սեռական հարաբերությունների գրավչության պատրանքի ստեղծմանը.

բ. ավանդական և ոչ ավանդական սեռական հարաբերությունների սոցիալական խեղված ընկալմանը.

գ. ոչ ավանդական սեռական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության հարկադրական մատուցմանը.

դ. ոչ ավանդական սեռական հարաբերությունների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը.

2) ավանդական սեռական հարաբերություն՝ մերձավոր ազգականներ չհամարվող չափահաս տղամարդու և չափահաս կնոջ միջև փոխադարձ համաձայնությամբ տեղի ունեցող սեռական հարաբերություն.

3) ոչ ավանդական սեռական հարաբերություն՝ ավանդական սեռական հարաբերություն չհամարվող ցանկացած այլ սեռական հարաբերություն.

4) մերձավոր ազգականներ՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածում նշված մերձավոր ազգականներ, ինչպես նաև որդեգրողներ և որդեգրվածներ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ
Պ-379[1]-01.10.2018-ՊԻՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 178.2-րդ հոդվածով.

«Հոդված 178.2. Երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացմանը սպառնացող տեղեկատվություն տարածելը

1. Երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացմանը սպառնացող տեղեկատվություն տարածելը կամ քարոզչությունը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կրկին անգամ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածի իմաստով երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացմանը սպառնացող տեղեկատվություն տարածելը կամ քարոզչությունը «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով արգելված քարոզչությունն է:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն օրինագծերի փաթեթը (**այսուհետ՝ նաև Փաթեթ**) նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել հանրության բարոյականության պաշտպանության ապահովման՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականության իրավական-կառուցակարգային հիմքերը: Մասնավորապես, Փաթեթով առաջարկվում է մեխանիզմներ ստեղծել՝ ժամանակակից աշխարհի հաճախ անվերահսկելի տեղեկատվական հոսքերի պայմաններում երեխաներին հակաբարոյական, նրանց լիարժեք ու ներդաշնակ զարգացմանն սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին զերծ պահելու համար:

Փաթեթի ընդունմամբ հետապնդվող նպատակն ունի հստակ իրավական հիմքեր:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 42-րդ և 44-րդ հոդվածներով սահմանված՝ համապատասխանաբար, կարծիքի արտահայտման և հավաքների ազատությունները, նշյալ հոդվածների համաձայն, կարող են սահմանափակվել պետության պոզիտիվ պարտականությունների տիրույթում գտնվող մի շարք հիմքերով, այդ թվում առողջության, բարոյականության, պատվի և բարի համբավի պաշտպանության նկատառումներով:

Հայտնի է, որ քարոզչությունն իրենից ներկայացնում է գաղափարների և հայացքների ինտենսիվ տարածման գործընթաց՝ այդ թվում իրական փաստերի և տեղեկատվության խեղաթյուրման միջոցով, որի նպատակն է ազդեցություն գործել հանրային կարծիքի, հանրային հոգեբանության ու տրամադրությունների վրա: Նման տեղեկատվության տարածման իրավական հիմնական կառուցակարգերից են խոսքի և կարծիքի, ինչպես նաև հավաքների ազատությունները, որոնց միջոցով տեղի է ունենում տարատեսակ, անգամ հանրորեն վնասակար գաղափարների տարածումը: Հետևաբար, պետությունը զանազան իրավական գործիքներով պարտավոր է նպաստել, որպեսզի խոսքի և հավաքների ազատությունների իրացումը չխաթարի հանրության բարոյական արժեհամակարգը: Իսկ հասարակության ցանկացած անդամի բարոյական նկարագիրն սկսվում է ձևավորվել մանկական տարիքից, երբ գիտակցական մակարդակում իրականությունն ընկալելու կարողության օբյեկտիվ սահմանափակվածության հետևանքով երեխան առավել քան մեծահասակները ենթակա է տարատեսակ, անգամ հանրային բարոյականության տեսանկյունից պախարակելի կամ վիճահարույց գաղափարների ազդեցությանը: Ուստի՝ պետությունը պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ երեխաներին հնարավորին ապահովագրելու բարոյական խեղումներից և պայմաններ ու միջավայր ստեղծելու երեխաների պատշաճ դաստիարակության և բնականոն զարգացման համար:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում*:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ՝ նաև ԽԱԿՄՕ**) 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհ հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը՝ (...) գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը:*

Վերոնշյալ իրավադրույթների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունը, ճանաչելով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ազգային-հոգևոր կարգավիճակը և համապատասխան օրենսդրական ակտերի միջոցով պայմաններ ստեղծելով, ինչպես ԽԱԿՄՕ-ում է նշված, եկեղեցու մենաշնորհային գործառույթ հանդիսացող հանրային բարոյականության կատարելագործման ոլորտում հոգևոր-բարոյական գործունեություն իրականացնելու համար, ճանաչում է Եկեղեցու դավանաբանության բարոյական կանխադրույթների իրավաչափությունը հասարակության և դրա անդամների կենսագործունեության կանոնակարգման հարցում: Դա բնականորեն ենթադրում է հասարակության յուրաքանչյուր անդամի դաստիարակության, կրթության, զարգացման գործընթացում բարոյական-հոգևոր կողմնորոշման առկայություն, որի առնվազն բազային չափանիշները պետությունը պարտավոր է սահմանել՝ այդպիսով Հայ առաքելական եկեղեցու կողմից խրախուսվող հոգևոր-բարոյական նորմերի տարածմանն աջակցություն ցուցաբերելով: Խոսքն ամենևին չի վերաբերում գրաքննությանը կամ խոսքի ազատության անհարկի սահմանափակմանը, այլ անձի հոգևոր-բարոյական դաստիարակության և զարգացման բնականոն կենսագործունեության, վերարտադրության և զարգացման, հայ ժողովրդի ազգային նկարագրի և ինքնության պահպանման:

Բնական է, որ պետության քաղաքականության առաջնային գործիքակազմն օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերն են, որոնց ընդունմամբ պետությունը կանոնակարգում է համապատասխան ոլորտները՝ սահմանելով ինչպես իր, այնպես էլ նշյալ կանոնակարգման ներքո հայտնվող սուբյեկտների վարքագիծը: Հետևաբար, սույն Փաթեթի մշակման համար առկա են ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական հիմքեր, որոնք վերաբերում են հանրային բարոյականության ոլորտում պետության կարգավորիչ դերին:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ևս անդրադարձ կա հանրային բարոյականության և, մասնավորապես, երեխաների բարոյական դաստիարակության և այդ հարցերում պետության դերին՝ իրավաչափ համարելով պետության միջամտությունը խոսքի ազատությանը՝ ի շահ հանրային բարոյականության և, մասնավորապես, երեխաների բարոյական և բնականոն զարգացման պաշտպանության: Օրինակ՝ «Երեխաների առողջությանը և զարգացմանը վնաս պատճառող տեղեկատվությունից երեխաների պաշտպանության մասին» ՌԴ դաշնային օրենքով իրավական հետապնդման են ենթարկվում երեխաների շրջանում ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչությամբ զբաղվող անձինք, ինչը նշանակում է, որ ՌԴ-ում պետությունն ստանձնել է պարտականություն պայքարել հստակ ուսուցանող, պրոպագանդող բնույթ ունեցող հակաբարոյական քարոզչության դեմ, որը նպատակ ունի երեխաներին համոզել ոչ ավանդական սեռական հարաբերությունների ընդունելիության մեջ:

Ավելին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (**այսուհետ՝ նաև ՄԻԵԴ**) Handyside v. United Kingdom գործով 1976թ. որոշմամբ և Hertzberg v. Finland գործով 1982 կայացված որոշմամբ ճանաչել է պետությունների ինքնավարությունը հանրային բարոյականության ոլորտում քաղաքականություն մշակելու և իրացնելու հարցերում՝ նշելով, որ առկա չեն համընդհանուր չափրոշիչներ արարքների բարոյականության որակման համար: ՄԻԵԴ-ը նշել է, որ եթե անձնական կյանքի անձեռնմեխելիության առումով անձն ունի լայն իրավունքներ, որոնք պետությունը չպետք է խախտի, այդ թվում՝ սեռական կողմնորոշման կապակցությամբ, ապա սեռական կողմնորոշման հարցերի հանրային քարոզչության և արտահայտման այլ ձևերի մասով պետությունն իրավունք ունի միջամտել՝ հանրային բարոյականության և այդ թվում երեխաների շահերից ելնելով: ՄԻԵԴ-ը սահմանել է, որ չափահասների՝ սեռական կյանքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքն ստորադասվում է երեխաների բարոյական դաստիարակության ապահովման շահին: Ընդ որում, նմանատիպ որոշում ունի նաև ԱՄՆ-ի գերագույն դատարանը United States v. Windsor գործով (2013թ.):

Փաթեթով առաջարկվում է որոշակի իրավական գործիքներով սահմանափակել այնպիսի գաղափարների և հայացքների քարոզչությունը, տեղեկատվության նպատակային տարածումը, որը վերաբերում է ոչ ավանդական սեռական հարաբերություններին, այն է՝ ազգակցական կապի մեջ չգտնվող չափահաս տղամարդու և կնոջ սեռական հարաբերություններից բացի այլ սեռական հարաբերություններին, և որպիսի գաղափարներն ու տեղեկատվությունը կարող են հասանելի դառնալ երեխաներին, այսինքն՝ մինչև 18 տարեկան անձանց:

Ոչ ավանդական սեռական հարաբերություններ են, օրինակ՝ ինցեստը, զոոֆիլիան, պեդոֆիլիան, միասեռական հարաբերությունները և այլն: Նման և այլ բնույթի տեղեկատվության նպատակային տարածումը երեխաներին հասանելիության պայմաններում վտանգում է երեխաների մտավոր, ֆիզիկական և հոգե-բարոյական բնականոն զարգացումը՝ ձևախեղելով նրանց սեռական դաստիարակությունը: Դրա հետևանքը կարող է լինել ավանդական ամուսնական հարաբերությունների և ընտանիքի ինստիտուտի դեգրադացիան և արժեզրկումը, հասարակության ֆիզիկական վերարտադրության ծավալի նվազումը, հայ ժողովրդի ազգային-հոգևոր նկարագրի ձևախեղումը: Այդպիսի երևույթները կարող են լուրջ մարտահրավեր դառնալ նաև ՀՀ ազգային անվտանգության համար, քանի որ ցանկացած պետության և պետական իշխանության սոցիալական հենքը ֆիզիկապես, հոգեպես և բարոյապես առողջ ժողովուրդն է, և առանց վերջինիս՝ անխուսափելիորեն թուլանում և անկում է ապրում նաև պետությունը:

Փաթեթով սահմանվել է ոչ ավանդական սեռական հարաբերությունների վերաբերյալ քարոզչության ուղղվածությունը, այն է՝ երեխաների մոտ ոչ ավանդական սեռական հարաբերությունների գրավչության պատրանքի ստեղծումը, ավանդական և ոչ ավանդական սեռական հարաբերությունների սոցիալական խեղված ընկալումը, ոչ ավանդական սեռական

հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության հարկադրական մատուցումը, ոչ ավանդական սեռական հարաբերության նկատմամբ հետաքրքրության առաջացումը: Այդպիսով սահմանազատվել է անհատական կամ խմբային մակարդակում, թեկուզ բարոյապես պախարակելի, սակայն անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքով պաշտպանվող վարքագիծը և երեխաներին հասանելի միջոցներով վերոնշյալ նպատակներով հակաբարոյական միջոցներով սեռական հարաբերությունների քարոզչությունից, որը հանդիսանում է Փաթեթի կարգավորման առարկան:

Առաջարկվող փոփոխությունների նորմատիվ ներգործության կառուցակարգի լիարժեքությունն ապահովվում է Վարչական իրավախախտումների օրենսգրքում առաջարկվող փոփոխությամբ, որի համաձայն՝ երեխաների շրջանում ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչության համար սահմանվել է վարչական պատասխանատվություն: